



Կապիտալ
ասեթ
մեներջմենթ

**2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Երևան, Խորենացու 15, թիվ 5 գրասենյակ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն ստեղծվել է 2012թ. հոկտեմբերի 18-ին, և գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ և ստացել թիվ 1 լինցենզիան:

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ղեկավար մարմիններն են հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովը, խորհուրդը և գլխավոր գործադիր տնօրենը, որի պաշտոնը զբաղեցնում է Հայկ Ոսկանյանը:

Ընկերությունը իրականացնում է բացառապես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի կառավարման լիցենզիայով և թույլտվությամբ նախատեսված գործունեություն:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թույլտվության հիման վրա Ընկերությունը կարող է նաև իրականացնել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված արժեթղթերի փաթեթի կառավարում և որպես լրացուցիչ ծառայություններ՝

- «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված խորհրդատվության տրամադրում՝ կապված իր կողմից կառավարվող արժեթղթերում ներդրումների հետ, և
- փայերի կամ ֆոնդի բաժնետոմսերի պահառություն:

Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ:

Ընկերությունն ունի խորհուրդ, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

Ընկերության միակ բաժնետերը «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերությունն է, որը ներդրումային ընկերություն է և նույնպես գրանցված է ՀՀ ԿԲ-ում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2014թ. հունվարի 14-ին:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին (այնքանով, որքանով դրանք տեղավորվում են ՖՀՄՍ շրջանակում) և Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող՝ ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներկայացված են հազար դրամներով առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Հիմնական միջոցներ

(a) Ճանաչումը և չափումը

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանը և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ որևէ հիմնական միջոցի մասերն ունեն տարբեր օգտակար ծառայություններ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից մուտքերի և օտարված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, որը զուտ հիմունքով ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ոչ գործառնական շահույթի կամ վնասի կազմում:

(b) Հեղափոխ ծախսումներ

Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավաստորեն չափվել: Հիմնական միջոցների առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

(c) Մաշվածություն

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա

առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը:

Ընթացիկ ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	3-10 տարի
Տնտեսական գույք	5-10 տարի
Վարձակալված տարածքի վրա կատարված կապիտալ ծախսեր	20 տարի

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ դրանք ավելացնում են այն կոնկրետ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները, որին դրանք վերաբերում են: Բոլոր մնացած հետագա ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարման ժամանակ:

Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում:

Ընթացիկ ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Հաճախորդների ռեեստրի վարման ծրագիր	5 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	5 տարի

- Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումները՝ նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը, արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

- Ծառայությունների մատուցման պայմանագրերի գծով հասույթի ճանաչման համար գործարքի ավարտվածության աստիճանի որոշման մոտեցումը, երբ ծառայության մատուցման գործարքի արդյունքները հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է ֆինանսական հաշվետվության ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա, հակառակ դեպքում հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:
- Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ, երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:
- Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են, բացառությամբ որակավորվող ակտիվներին վերաբերողները, որոնք կապիտալացվում են ՀՀՄՍ 23-ին համապատասխան: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:
- Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող առևտրական նպատակներով պահվող (ԱՆՊ) ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ վերաչափվում են իրական արժեքով՝ իրական արժեքից առաջացող օգուտները (կորուստները) ճանաչելով տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ որպես շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող առևտրական նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ՝ ներառելով առևտրային գործունեությունից զուտ եկամուտների կազմում: ԱՆՊ ֆինանսական ակտիվների վաճառքի դեպքում դրանց վաճառքից ստացվող (ստացվելիք) գումարը և վաճառված ԱՆՊ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի (ներառյալ իրական արժեքով ճշտումները) տարբերությունը ներկայացվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող առևտրական նպատակներով պահվող ներդրումների առքուվաճառքից զուտ եկամուտ:
- ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ՝ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներում: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում և ներկայացվում

են տոկոսային և նմանատիպ եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ տոկոսային ծախսերի կազմում:

- Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից (եկամուտից) և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամուտից): Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն գործարքների գծով առաջացած հարկի, որոնց արդյունքները ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում: Վերջին դեպքում շահութահարկի գծով ծախսը նույնպես ճանաչվում է սեփական կապիտալում: Ընթացիկ հարկի գծով ծախսը ընթացիկ տարվա հարկվող շահույթից վճարման ենթակա շահութահարկն է և նախորդ տարիների ընթացիկ հարկի ճշգրտումները: Հետաձգված հարկի գծով ծախսը (եկամուտը) հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մնացորդների փոփոխությունների արդյունքն է: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում բավարար հարկվող շահույթի ստացումը, որի հաշվին կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնասները:

Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01.10.13-31.12.13	01.01.13-31.12.13	01.10.12-31.12.12	01.01.12-31.12.12
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	2,792	11,743	2,000	2,000
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	4,021	15,152	2,072	2,072
Ընդամենը	6,813	26,895	4,072	4,072

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	01.10.13-31.12.13	01.01.13-31.12.13	01.10.12-31.12.12	01.01.12-31.12.12
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(-)	(-)	(-)	(-)
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(1,330)	(3,901)	(-)	(-)
Ընդամենը	(1,330)	(3,901)	(-)	(-)

Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	5,483	22,994	4,072	4,072
--	--------------	---------------	--------------	--------------

Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	01.10.13-31.12.13	01.01.13-31.12.13	01.10.12-31.12.12	01.01.12-31.12.12
Միջնորդավճարներ փայերի թողարկումից	-	195	-	-
Ներդրումային ֆոնդերի կառավարման պարզևավճարներ	276	422		
Ընդամենը	276	617	-	-

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	01.10.13-31.12.13	01.01.13-31.12.13	01.10.12-31.12.12	01.01.12-31.12.12
Միջնորդավճարների գծով	(-)	(106)	(-)	(-)
Ընդամենը	(-)	(106)	(-)	(-)

Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	276	511	(-)	(-)
--	------------	------------	------------	------------

Ծանոթագրություն 5. Եկամուտ շահաբաժիններից

Ընկերությունը շահաբաժիններից եկամուտներ չի ունեցել:

Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13	01.10.12- 31.12.12	01.01.12- 31.12.12
Շահույթ կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ	2,810	2,628	(580)	(580)
Շահույթ կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	15,574	20,446	363	363
Ընդամենը	18,384	23,074	(217)	(217)

Արտարժույթային գործառնություններից	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13	01.10.12- 31.12.12	01.01.12- 31.12.12
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	-	-	-	-
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	-	-	-	-
Ընդամենը	-	-	-	-
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	18,384	23,074	(217)	(217)

Ծանոթագրություն 7. Այլ գործառնական եկամուտ

Ընկերությունն այլ գործառնական զուտ եկամուտներ չունի:

Ծանոթագրություն 8. Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

Ընկերությունը զուտ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումներ հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում չի իրականացրել:

Ծանոթագրություն 9. Ընդհանուր վարչական ծախսեր

Ընդհանուր վարչական ծախսեր	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13	01.10.12- 31.12.12	01.01.12- 31.12.12
Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(7,631)	(27,072)	(3,543)	(3,543)
Սոցիալական ապ. պետ. հիմնադրամին հատկացումների գծով ծախսեր	-	-	(307)	(307)
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	-	-	(514)	(514)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(2,000)	(6,000)	-	-

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված եռամսյակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(1,750)	(4,530)	(1,341)	(1,341)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(234)	(863)	(77)	(77)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(169)	(658)	(9)	(9)
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(602)	(2,224)	(462)	(462)
Այլ վարչական ծախսեր	(52)	(486)	(810)	(810)
Ընդամենը	(12,438)	(41,833)	(7,063)	(7,063)

2013 թ. 4-րդ եռամսյակում աշխատողների թիվը եղել է 7, իսկ մեկ աշխատողին բաժին ընկնող միջին աշխատավարձը՝ 333 հազ. դրամ:

Ծանոթագրություն 10. Այլ գործառնական ծախսեր

Այլ գործառնական ծախսեր	01.10.13-31.12.13	01.01.13-31.12.13	01.10.12-31.12.12	01.01.12-31.12.12
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	(293)	(762)	-	-
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(11)	(11)	-	-
Ընդամենը	(304)	(773)	-	-

Ծանոթագրություն 11. Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)

Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս) Ընկերությունը չի ունեցել:

Ծանոթագրություն 12. Շահութահարկի գծով ծախս (Եկամուտ)

Շահութահարկի գծով ծախս	01.10.13-31.12.13	01.01.13-31.12.13	01.10.12-31.12.12	01.01.12-31.12.12
Ընթացիկ հարկի գծով ծախս (եկամուտ)	-	-	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)	2,003	426	(642)	(642)
Ընդամենը	2,003	426	(642)	(642)

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2013թ. հունվար- դեկտեմբեր	Արդյունավետ դրույքաչափ (%)	2012թ. հունվար- դեկտեմբեր	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը	3,974	-	(3,208)	-
Շահութահարկ՝ դրույքաչափով	795	20.00	(642)	20.00
Չհարկվող եկամուտներ (ստացված շահաբաժիններ)	(371)	(9.34)	-	-
Չնվազեցվող ծախսեր	2	0.05	-	-
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	426	10.7	(642)	20.00

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդն առ 31.12.12 դրությամբ	2013թ. շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդն առ 31.12.13 դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	200	345	545
Այլ ակտիվների գծով	-	-	-
Ստեղծված պահուստների գծով	143	402	545
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	57	(57)	-
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	(-)	(3,022)	(3,022)
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	(-)	(3,022)	(3,022)
Այլ պարտավորությունների գծով	-	-	-
Այլ ակտիվների գծով	-	-	-
Ջուրպահանջ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	200	(2,677)	(2,477)
Հաջորդ ժամանակաշրջանի տեղափոխվող հարկային վնաս	442	2,251	2,693
Ընդամենը զույգ հետաձգված հարկային ակտիվի (պարտավորության) շարժը	642	(426)	216

Ծանոթագրություն 13. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

Ծանոթագրություն 13-ում բացահայտված է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկման (հաշվարկման բանաձևերում որպես համարիչ և հայտարար օգտագործվող գումարների) վերաբերյալ տեղեկատվությունը:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	01.10.13- 31.12.13	01.01.13- 31.12.13	01.10.12- 31.12.12	01.01.12- 31.12.12
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս) հարկումից հետո	9,398	3,548	(2,566)	(2,566)
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ	-	-	-	-

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված եռամսյակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

բաժնետոմսերի գծով				
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	9,398	3,548	(2,566)	(2,566)
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	21,000	21,000	21,000	21,000
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	0,448	0,169	(0,122)	(0,122)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նորացված շահույթ	0,448	0,169	(0,122)	(0,122)

Ծանոթագրություն 14. Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

14.1. Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	առ 31.12.13	առ 31.12.12
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	-	-

14.2. Դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը

	առ 31.12.13	առ 31.12.12
Դրամական միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 15. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընթացիկ հաշիվներ	առ 31.12.13	առ 31.12.12
ՀՀ բանկերում ընթացիկ հաշիվներ	1,915	530
Ընդամենը	1,915	530
Վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ, այլ պահանջներ	100,000	100,000
Հաշվեգրած տոկոսներ	855	1,049
Ընդամենը	102,770	101,579
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)	(-)	(-)
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	102,770	101,579

Ընկերությունը արտարժույթով արտահայտված դրամական միջոցներ չի ունեցել: Մնացորդը 31.12.13 թվականի վերջում կազմել է 1,915 հազ. ՀՀ դրամ և այն օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Ծանոթագրություն 16. Պահանջներ հաճախորդների նկատմամբ

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հաճախորդների նկատմամբ պահանջներ չի ունեցել

Հաշվետու և նախորդ հաշվետու ժամանակաշրջանների վերջում Ընկերությունը ժամկետանց, խնդրահարույց և արժեզրկված վարկեր և տրամադրած փոխառություններ չի ունեցել:

Ընկերությունը չունի նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացված ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում ստացված և տեղաբաշխված միջոցներ:

Ծանոթագրություն 17. Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	առ 31.12.13	առ 31.12.12
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝	118,207	95,765
գանձապետական պարտատոմսեր	118,207	95,765
Ընդամենը պետական արժեթղթեր	118,207	95,765
Այդ թվում՝ ռեպո համաձայնագրով վաճառված	30,799	-
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	առ 31.12.13	առ 31.12.12
	<i>Չցուցակված</i>	<i>ցուցակված</i>
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի	8,807	-
երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-
կապիտալի գործիքներ	-	-
Այլ (փայեր)	8,807	-
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր	8,807	-
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ		
Ֆորվարդ	-	-
Փոխարժեքային սվոպ	-	-
Ընդամենը	-	-
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	127,014	95,765

Ծանոթագրություն 18. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 19. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Պետական արժեթղթեր	առ 31.12.13	առ 31.12.12
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
զանձապետական պարտատոմսեր	-	-
Ընդամենը պետական արժեթղթեր	-	-
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ	-	-

Ծանոթագրություն 20. Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում

Ընկերությունն այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ չունի:

Ծանոթագրություն 21. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը	Համակ. և կապի միջոցներ	Գույք և գրասենյակային սարք.	Վարձակալված ՀՄ-ներում կապիտալ ներդրումներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը 01.01.12	-	-	-	-
Ավելացում	263	-	-	263
Մնացորդը 31.12.12	263	-	-	263
Ավելացում	4,844	906	4,954	10,704
Մնացորդը 31.12.13	5,107	906	4,954	10,967
Կուտակված մաշվածություն				
Մնացորդը 01.01.12	-	-	-	-
Ավելացում	-	-	-	-
Մնացորդը 31.12.12	-	-	-	-
Ավելացում	501	86	165	752
Մնացորդը 31.12.13 վերջում	501	86	165	752
Զուտ հաշվեկշռային արժեք				
31.12.13 վերջում	4,606	820	4,789	10,215
31.12.12 վերջում	263	-	-	263

Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվներում կապիտալ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը 01.01.12	-	-	-	-
Ավելացում	-	-	300	300
Մնացորդը 31.12.12	-	-	300	300
Ավելացում	830	850	1,380	3,060
Փոխանցում շահագործման համար մատչելի ՈՆԱ-ների	-	-	(1,680)	(1,680)
Մնացորդը 31.12.13	830	850	-	1,680
Կուտակված մաշվածություն				
Մնացորդը 01.01.12	-	-	-	-
Ավելացում	-	-	-	-
Մնացորդը 31.12.12	-	-	-	-
Ավելացում	10	11	-	21
Մնացորդը 31.12.13	10	11	-	21
Զուտ հաշվեկշռային արժեք				
31.12.13	820	839	-	1,659
31.12.12	-	-	300	300

Ծանոթագրություն 22. Հետաձգված հարկային ակտիվներ

Տե՛ս ծանոթագրություն 12:

Ծանոթագրություն 23. Այլ ակտիվներ

Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	առ 31.12.13	առ 31.12.12
Դեբիտորական պարքեր բյուջեի գծով (շահութահարկի կանխավճար)	20	
Ֆոնդերի կառավարման գծով պարգևավճար	66	-
Տարածքի վարձակալության համար կանխավճար	2,436	9,600
Այլ	95	-
Ընդամենը	2,617	9,600

Ծանոթագրություն 24. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ներգրավված փոխառություններ և ավանդներ, այլ	առ 31.12.13	առ 31.12.12
ՀՀ բանկեր		
Ռեպո համաձայնագրեր	30,628	-

Հաշվեգրված տոկոսներ	98	-
Ընդամենը	30,726	-

Ծանոթագրություն 25. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ	առ 31.12.13	առ 31.12.12
Ներգրավված փոխառություններ	-	-
Ռեպո համաձայնագրեր	-	-
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 26. Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ

Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	առ 31.12.13	առ 31.12.12
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ածանցյալ գործիքներ՝ Ֆորվարդ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 27. Ընկերության կողմից թողարկված արժեթղթեր

Ընկերությունը թողարկված արժեթղթեր չունի:

Ծանոթագրություն 28. Հետաձգված հարկային պարտավորություններ

Տե՛ս ծանոթագրություն 12:

Ծանոթագրություն 29. Պահուստներ

Պահուստներ	առ 31.12.13	առ 31.12.12
Սկզբնական մնացորդ	715	-
Պահուստին կատարված մասհանումներ	3,054	715
Պահուստի օգտագործում	(1,044)	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	2,010	715
Վերջնական մնացորդ	2,725	715
Արձակուրդայինի գծով	1,725	315
Աուդիտի գծով	1,000	400

Երկու պահուստների գծով էլ Ընկերությունն ունի իրավական պարտականություն: Դրանց արդյունքում դրամական արտահոսքերն ակնկալվում են տարվա ընթացքում և աուդիտի

ժամանակ: Հաշվի առնելով կարճաժամկետ և ոչ էական լինելը՝ պահուստների գումարը որոշվել է առանց գեղջման:

Ընկերությունը պահուստավորում պահանջող այլ իրավական կամ կառուցողական պարտականություններ չունի: Ընկերության հանդեպ որևէ իրավական հայց հարուցված չկա: Ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ծանոթագրություն 30. Այլ պարտավորություններ

Այլ պարտավորություններ	առ 31.12.13	առ 31.12.12
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով		
Շահութահարկի գծով	-	-
ԱԱՀ-ի գծով	-	-
Եկամտային հարկի գծով	-	-
Աշխատակիցների նկատմամբ (աշխատավարձի գծով)	-	-
Աշխատակիցների կամավոր կենսաթոշակային վճարների գծով	-	
Պարտավորություններ մատակարարների նկատմամբ	58	-
Ընդամենը	58	-

Ծանոթագրություն 31. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 210,000 հազ. ՀՀ դրամ է, որը կազմում է 21,000 (քսանմեկ հազար) հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմս, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:

Ընկերության հայտարարած բաժնետոմսերի քանակը կազմում է 30,000 (երեսուն հազար) հատ:

Մասնակցի անունը, ազգանունը	Ունեցած մասնակցության գումարը	Մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ
«Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ	210,000	100.00%

Ծանոթագրություն 32. Կապիտալի այլ տարրեր

Կապիտալի այլ չբացահայտված տարրեր չկան :

Ծանոթագրություն 33. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու եռամսյակում Ընկերության մայր կազմակերպության հետ տեղի են ունեցել հետևյալ գործարքները.

(i) Ծախսեր

	Գործարքի գումար	Չմարված մնացորդ
հազ. դրամ	Հաշվետու եռամսյակ	

	Գործարքի գումար	Չմարված մնացորդ
հազ. դրամ	Հաշվետու եռամսյակ	
Պարտատոմսերի ձեռքբերում	-	-
Հակադարձ հետզնման համաձայնագրերի գծով հաշվեգրված տոկոսներ	1,330	98
Ռեեստրավարման ծառայություն	30	(36)
	1,360	62

(ii) Եկամուտներ

	Գործարքի գումար	Չմարված մնացորդ
հազ. դրամ	Հաշվետու եռամսյակ	
Պարտատոմսերի վաճառք	-	-
	-	-

Կապակցված կողմերի հետ բոլոր գործարքներն իրականացվել են շուկայական պայմաններով:

Ծանոթագրություն 34. Կապիտալ և կապիտալի համարժեքություն

	31.12.13	31.12.12
Կանոնադրական կապիտալ	210,000	210,000
Գլխավոր պահուստ	-	-
Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	3,548	(2,566)
Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	(2,566)	-
Ընդամենը	210,982	207,434

Ծանոթագրություն 35. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշում է շուկայական գնանշումների հիման վրա: Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներն արտացոլված են իրական արժեքներով, բացառությամբ փոխառությունների և վարկերի, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրանց իրական արժեքը գնահատվում է հաշվեկշռային արժեքին մոտ:

Ծանոթագրություն 36. Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում

31.12.13թ. դրությամբ կանխատեսվող ապագա գործարքներ առկա չեն եղել:

Ծանոթագրություն 37. Գործառնական վարձակալություն

Ընկերությունը իր գործունեությունը կազմակերպում է գործառնական վարձակալությամբ ստացված տարածքում: 31 դեկտեմբեր 2013թ. դրությամբ մինչև մեկ տարի չեղյալ չհամարվող վարձակալության վճարը կազմում է 2,400 հազ. ՀՀ դրամ, իսկ 2013 թվականի ընթացքում ծախս ճանաչված գումարը կազմում է 7,200 (ներառյալ ԱԱՀ) հազար դրամ:

Ծանոթագրություն 38. Ապահանջում

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փոխանցված ակտիվի ամբողջությամբ կամ դրամի մասի ապահանջման չափանիշներին չբավարարման դեպք չի եղել:

Ծանոթագրություն 39. Գրավադրված ակտիվներ

31.12.13 դրությամբ Ընկերությունը գրավադրված ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 40. Ընդունված գրավ

Ընկերությունը 31.12.13թ. դրությամբ գրավով ապահովված ակտիվներ չի ունեցել:
 Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ունի 30,799 հազ.դրամի իրական արժեքով հակադարձ հետզնման պայմանագրով վաճառած պետական արժեթղթեր (տոս՝ ծանոթ.17):

Ծանոթագրություն 41. Պարտավորությունների չկատարում/խախտում

31.12.13թ. դրությամբ Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտում չի եղել:
 Ընկերության առանցքային անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները, որոնք ներառված են աշխատավարձի գծով ծախսումներում.

հազ. դրամ		01.01.13-31.12.13	01.01.12-31.12.12
Աշխատավարձ և պարգևավճար		12,120	2,152
		12,120	2,152

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարությունը

Մենք պատասխանատու ենք Ընկերության ֆինանսական վիճակն արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Այսպիսով Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվություններն Ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,
- Ընկերությունում գործում է ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգ,
- Ընկերությունում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:

Հավաստիացնում ենք նաև, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Գլխավոր գործադիր տնօրեն

Հայկ Ոսկանյան

Գլխավոր հաշվապահ

Կարեն Խաչատրյան

**«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ
լիազոր ներկայացուցիչ**

14.01.2014թ.